

տակ, փայլուն ծաղիկներով նռնենիներու, լայն տերեւներով պանաններու, որոնց վրայ բարձրացող արմաւենին կը շարժէ իր զարգմանակաձև գլուխը: Այս թանձրախիտ կանաչութենէն հոս եւ հոն կը վերացայտեն սիրուն հովոցներ, որոնց մօտ անգաղ-րում անձրեւներու ջուրերը ամէն կողմ տարածուելով կը պահպանեն հողին արգասաւորութիւնը եւ կ'ոռոգեն ծառերուն մէջ պահուըտած ամէն տեսակ բանջարեղէնները:

Յոպպէի այս համառօտ նկարագրութենէն վերջ պիտի գրենք անոր քրիստոնէական կեանքը, Սաչակրաց ժամանակը եւ իր եկեղեցիները, Սիւնոն Սաղախորդի եւ Տաթլիպայի տուները, ինչպէս նաեւ Ս. Պետրոսի եկեղեցւոյն գիւտը. յետ այնու պիտի գրենք մեր Ս. Նիկողայոս վանքին ծագումը, կատարուած շինարարութիւնները եւ այն դէպքերը՝ որ տեղի ունեցան նոյն վանքին մէջ: Մեր ծրագրէն դուրս կը մնայ ծանօթագրել այն դէպքերը որ տեղի ունեցած են Յոպպէի մէջ Խորայէլացիներէն առաջ կամ անոնց ժամանակ. գերութենէ առաջ կամ վերջը:

1. Քրիստոնէական կեանքը Յոպպէի մէջ.

Առաքելական դարուն սկիզբը Ս. Պետրոս կը քարոզէր Պաղեստինի ծովեզերայ կողմերը. Գործք Առաքելոցին մէջ կը կարդանք (Թ. 36-43) որ Առաքեալը Լիւզղայէն Յոպպէ կը հրաւիրուի նորագարձ քրիստոնեաներու կողմէն, վասն զի բարեպաշտ կին մը Տաբիթա անուն, այլ անուամբ Այծեմնիկ, որ հիւանդանալով վախճանած էր. կին մ'էր ան «գործովք բարեօք եւ ողորմութեամբք զոր առնէր»: Պետրոսի աղօթքով Այծեմնիկ կ'ողջանայ. անոր կենդանութեամբը այրիները կը մխիթարուին եւ Յոպպէի մէջ շատերը քրիստոնեայ կը դառնան: Պետրոս շատ ժամանակ կը մնայ Յոպպէի մէջ, Սիմոն անուն խաղախորդի մը տունը: Յոպպէի մէջ Պետրոս ունեցաւ տեսիլ մը կամ, ըստ Գործք Առաքելոցի, զարմացում մը (Ժ. 10), նոյն միջոցին ան կը տեսնէ երկինքը բացուած «եւ զչորեցուցեաց տտնոց կախեալ անօթինչ իբրեւ կտաւոյ մեծի իջեալ նստեալ ի վերայ երկրի, յորում էր ամենայն չորքոտտնիք եւ սողունք երկրի եւ թռչունք երկնից եւայլն» (Ժ. 11-3): Այս տեսիլը երկնային նշան մ'էր հրա-